



ՈՐՈՇՈՒՄ N 20

23 դեկտեմբերի 2015 թվականի

**«ԵՊՀ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏԿՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 8-րդ և 43-րդ հոդվածներով, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 8-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 8-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

1. Ստեղծել «ԵՊՀ ուսանողական ծառայություններ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (այսուհետ՝ Ընկերություն):
2. Ընկերության հիմնադիր և միակ մասնակից համարել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամին:
3. Ընկերության մասնակցի բաժնեմասի կառավարման լիազորությունները վերապահել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ղեկավորին:
4. Որպես Ընկերության կանոնադրական կապիտալ՝ ներդնել 50000 (հիսուն հազար) ՀՀ դրամ:
5. Ընկերության գտնվելու վայր համարել ՀՀ, 0025 ք. Երևան, Ալեք Մանուկյան 1 հասցեն:
6. Հաստատել Ընկերության կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:
7. Ընկերության պետական գրանցման և կանոնադրական կապիտալի վճարման ծախսերը կատարել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի միջոցների հաշվին:
8. Ընկերության գործադիր մարմին համարել Ընկերության տնօրենին՝ այդ պաշտոնում հաստատելով Արմենակ Ֆրունզիկի Հարությունյանին:
9. Հանձնարարել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ղեկավորին՝ դիմելու Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությանը՝ Ընկերությունը և Ընկերության կանոնադրությունը գրանցելու համար: